

ԳԼՈՒԽ Բ

Սուրեն Կամսարական քառասնամեայ անձ մ'եր, թիկնաւետ, յաջողակ զենքերու մէջ, կորովի ձեռոք եւ մտօք ինք. Կամսարական զարմին ամենէն փոքր եղբայր լինելով եւ անզաւակ, եւ իւր կինը կորսնցնելով՝ որ շատ կը սիրեր, գրեթէ թողած էր հայրենի տունը Շիրակ, եւ իւր քրոջ Բիւրեղի վրայ մեծ սեր ունենալով նրա հետ կը բնակուէր Կոզովփտ: Բայց քանի որ Գրիգոր կը մեծնար, իւր՝ Գրիգորի վրայ սերն էլ օրաւոր կը մեծնար: Գրիգոր հանդարտ եւ խելօք էր բնաւորութեամբ, իւր հօրը՝ Դաւիթ Մամիկոնէի պէս, որ տկար եւ հիւանդոտ լինելով չունէր հայ նախարարաց այդ ընդհանուր եղած զուարճութեանց, որսի, պատերազմի, մականախաղի, պերճութեան եւ անառակութեան սերը, այլ ընհակառակն իւր մտաւոր կարողութիւնքը մշակելով՝ ուսմանց եւ գիտութեանց սեր ունէր: Նա նոյնը իւր զակին հաղորդէր էր: Վարդանաբերդ հայերէն եւ յունարէն գրոց հարուստ մատենադարան մը ունէր, եւ Մամիկոնեան իշխանին միմիայն ուրախութիւնն էր եւ միսիթարութիւն տեսնել իւր Գրիգոր վարժ եւ յաջողամիտ. ժամանակին գիտութեանց մէջ տարիքէն յառաջադէմ: Իւր պալատը միշտ լեցուն էր գիտնական վարդապետներով եւ աշխարհահած ճամփորդներով. եւ Գրիգոր ուշի-ուշով մտիկ կ'ընէր ամէն խօսակցութիւն, որ նոր էին իրեն համար եւ միտքը կը զօրացնէին: Թեպէտ ծնողքը գոհ էին իրենց զակին մտաւոր զարգացմանէն, բայց նոյնը կարելի չէր գրուցել Սուրենի համար, որ երբ Դաւիթ հոն չէր, կը մտնէր Գրիգորի սենեակը եւ յափշտակելով գրքերն առջեւէն, «Մամիկոնեան պատանուոյ մը համար շատ է եւ բաւական ինչ որ գիտես, քիչ մ'էլ ուրիշ մարզերու նայինք» ըսելով՝ սուսերամարտութեան, նիզակախաղութեան եւ ձիամարզութեան կրկնութիւններ ու կը զբաղեցնէր, առանց ուշ դնելու իւր քրոջ դիտողութեանց. շատ անգամ որսի տանելով հետը լեռներ, սարեր, ձորեր հետի կը քալցնէր, եւ երեկոյին, երբ Գրիգոր յոգնած, դադրած, տուն կը դառնար գրեթէ անկարող շարժուելու, ինք Սուրեն առաջինն էր նրա ծնողաց ըսելու թէ «Ահա այսպէս Վարդաններ եւ Վահաններ կը զարգանան եւ կը հասնին, եւ ոչ գրքերու առաջ ժամեր անցնելով»: Իսկ Դաւիթ, որ կը տեսնէր թէ տղան օրաւոր կը զօրանար այդ մարմնամարզութենէն ժպտելով կ'ըսէր. Սուրեն եւ ես առանձին կատարեալ մարդ չենք, ես կարող միտք միայն եմ, նա կարող մարմին միայն է. աստուած տա, որ Գրիգոր երկուքն էլ ունենա:

Սուրեն զօրաւոր կազմուածքի տեր եւ անխռով միտք, վասնզի ներկան՝ օրը եւ ժամը միայն կը մտածէր սովորաբար, որ ոչ Թեոդորոսի պէս ազգին չափազանց սիրահարն էր, եւ ոչ Գրիգորի պէս Ռշտունեաց Օրիորդին, անկողին եւ բուն